ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«___» ապրիլի 2012թ. N_____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ» h.345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Սեբաստիա փողոցի h.18 շենքի h.33՝ 36.6քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 14.10.2011թ h.2714148 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Աշոտ Հարությունյանին, Լուսյա Հայրապետյանին, Ելենա Հարությունյանին, Գայանե Մովսեսյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աշոտ Հարությունյանը դիմել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Սեբաստիա փողոցի հ.18 շենքի հ.33՝ 36.6քմ ընդհանուր մակերեսով բնակարանն իր ընտանիքին մասնավորեցնելու խնդրանքով։

Երևան քաղաքի ժողովրդական դեպուտատների Շահումյանի շրջանի գործադիր կոմիտեի 04.04.1983թ. հ.62/21 ընդ-61ա գրությամբ Սեբաստիա փողոցի հ.18 շենքի հ.33 նկուղային տարածքը, ժամանակավորապես օգտագործման համար հատկացվել է Սեբաստիա փողոցի հ.18 շենքի հ.55 բնակարանի բնակիչ Գագիկ Հարությունյանին։

1994թ.-ին Գագիկ Հարությունյանը մահացել է։ Տղան՝ Աշոտ Հարությունյանը 1983թ.-ից մինչև օրս ընտանիքի չորս անդամներով բնակվում է Սեբաստիա փողոցի հ.18 շենքի հ.33 հասցեում (հիմք՝ ՀՀ ոստիկանության բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին հ.249746 տեղեկանքը), սակայն համապատասխան փաստաթղթերի, ինչպես նաև նշված հասցեում հաշվառման բացակայության պատճառով այն մասնավորեցնելու հնարավորություն չի ունեցել։

Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տեղեկատվական կենտրոնի տվյալների, Աշոտ Հարությունյանի, Լուսյա Հայրապետյանի, Ելենա Հարությունյանի և Գայանե Մովսեսյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ։

Նկատի ունենալով, որ ներկայումս բնակարանը հաշվառվել է բնակելի ֆոնդում և կատարվել է Երևան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում և քաղաքացու ընտանիքը փաստացի առանց հաշվառման բնակվում է նշված հասցեում, իսկ Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի հ.345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի համաձայն Երևանի քաղաքապետի որոշմամբ կարող են սեփականության իրավունքով անհատույց օտարվել համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանները կամ բնակելի տները միայն այն անձանց, ովքեր փաստացի բնակվում և հաշվառված են տվյալ բնակարաններում կամ բնակելի տներում՝ ներկայացնելով բնակարանը զբաղեցնելու իրավահաստատող փաստաթղթեր, բնակարանը սեփականության իրավունքով Աշոտ Հարությունյանի ընտանիքին անհատույց օտարելու համար անհրաժեշտություն է առաջացել կայացնելու Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ